ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 30 օգոստոսի 2019թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Ալեքսան Իգիթյան
Անդամներ	Սրապ Հարությունյան
	Ավետիք Ամիրյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող հարթեցնող մեքենայի (գլդոն) նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 980 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Արթուր Տոնոյանը (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չերնիշևսկու փող., տուն 51, էլ. փոստ՝ artur.tonoyan.2019@list.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը, որը համընկնում էր նախահաշվային գնի հետ:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Արթուր Տոնոյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Արթուր Տոնոյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Արթուր Տոնոյանի հետ կնքել հարթեցնող մեքենայի (գլդոն) մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Ալեքսան Իգիթյան

Հանձնաժողովի անդամներ _____ Սրապ Հարությունյան

_____ Ավետիք Ամիրյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան